Աստուած գիտէ, ինչպիսի խարդախ հաշիւներով և ինչո՞ւ չանել խարդախութիւն, երբ այդ հասարակ մշակները ոչ գիր են գիտում և ոչ էլ Պիրալոս են ճանաչում (Լյդպէս են ասում իմ հայրենիքում)։ Լյո՛, տխուր և շատ տխուր զոյներով կարելի է նկարագրել այստեղի մշակ դասի կեանքը, որը սիստեմատիքաբար հարստահարվում է գործարանատէրերից։ Լյդ բոլորը այդպէս տեսնելով, էլ ի՞նչ իրաւունք ունենք մենք քաղաքակրթվածներս դանդատվել Փոքր-Ասիայի խորքերում ապրող վայրենի բաշիբուզուկների, քուրդերի և չերքէզների անեղծութեան վրա, մինչդեռ ինքներս այդչափ անգութ և անխիղճ ենք դէպի մեր մերձաւորները։

Խաւսական համարելով այդքանը Խաղուի մշակների դրութեան մասին, մեծայոյս եմ, որ արդարադատ «Մշակ» լրագիրը, որ միշտ չէ զլացել պաշտպան հանդիսանալ ամենայն ռառապեալներին և հալածեալներին, պաշտպան կը հանդիսանայ և հասարակութեան այդ թշուառ դասակարգին—մշակներին, որոնք այդչափ բարբարոսաբար հարստահարվում են։ Իսկ ես ժամանակ առ ժամանակ կաշխատեմ դիմել այդ հարցին։

Շիրվանզադէ

ՆԱՄԱԿ ՄԱՏՐԱՍԻ ԳԻՒՂԻՑ

—

20 հոկտեմբերի

Մատրաս գիւղը, ինչպէս Ընդհանրական բազմաթիւ հայ և պարսիկ գիւղաքաղաքը, էր պարսիկ բէկերի սեպհականութիւն։ Այնքին ժամանակներում այս գիւղը շամախեցի Աղեաբխանենանք կոչված բէկերի ժառանգական կալուածքն էր, որոնք անյայտ տարիներից սկսած, խեղճ գիւղականներին իրանց անսահմ կամայականութեան զոհ էին դարձրած և անյագաբար քամում էին նրանց դառն աշխատանաց ծուռը։ Այնքին տարիներում տէրութեան կողմից Խաղուի Նահանգի բէկական կալուածոց վրա նշանակած հաւատարմատարը, քննելով յիշեալ բէկերի նախնեաց Մատրասան տիրապետելու հանգամանքները, և գտնելով, որ նրանք բոլորովին անիրաւացի կերպով են սեպհականացրել այդ գիւղը, սկսում է դատ բանալ յիշեալ բէկերի հետ։ Հետևաբար անցեալ 1879 թուի յուլիսի 10-ին Շամախու Նահանգական դատարանում քննութիւն է սկսվում այդ գործի մասին, և դատարանը գտնում է, որ Աղեաբխանենանց սերունդը բոլորովին անիրաւացի կերպով է տիրապետում Մատրասային, վճռում են այնուհետև զրկել նրանց այդ գիւղի վրա իշխանութիւն անելու իրաւունքից, դարձնելով նրան արքունական կալուածք։ Աղեաբխանենանք անբաւական մնալով այդ վճռից, ապելացիա են տալիս Թիֆլիսի դատաստանական պալատը։ Տարակոյս չը կայ, որ պալատը ևս գործը կը վճռէ յօգուտ Մատրասայի հասարակութեան, և հետևաբար Մատրասան պիտի ազատվի պարսիկ բէկերի հարստահարութիւններից։

Թէև Մատրասան հռչակված է իբրև մի նշանաւոր ու երևելի գիւղ, սակայն ժողովուրդը վերջին ատենների տգիտութեան և խաւարի մէջ է գտնվում։ Հշմարիտ է, Մատրասան նիւթական կողմից համեմատաբար փոքր ինչ աւելի ապահովված է, քան իր շրջապատող միւս գիւղաքաղաքը, սակայն մտաւոր կողմից ամենավերջին հայ գիւղից անգամ յետադէմ է։ Ժողովուրդը զուրկ է իր մայրենի լեզուի գիտութիւնից, երկու բառ անգամ չէ կարող արտայայտել իր մայրենի բարբառով։ Ժողովուրդը խօսում է մի օտարազգի աղճատված բարբառով, որը այս գիւղից դուրս ոչ ոք չէ հասկանում։ Լյդպէսի մի ժողովուրդ ի՞նչ զարգացման ընդունակ կարող է լինել։ Լյատեղ ընդհանրացած չէ այն սովորութիւնը, որ կայ մի քանի օտարախօս հայ գիւղերում, ինչպէս, օրինակ, Նիժոմ, Աղարդաշենում, Քիվրդարում և այլն, որոնց հայ բնակիչները իրանց հայրենակից հայերի հետ եթէ ոչ մայրենի լեզուով, գոնէ կարողանում են խօսել մաքուր թուրքերէն և այսպիսով հաղորդում են իրանց միտքը։ Բայց Մատրասայի ժողովուրդը այդ շնորհից էլ զրկված է։ Մատրասեցին խօսում է մի անհասկանալի լեզուով, որ մի տեսակ խառնուրդ է թուրքերէնի և պարսկերէնի, բացի դրանից նա մի ուրիշ լեզու չը գիտէ, ի հարկէ, բացառութիւն կազմողների մասին չենք խօսում։

Անհերքելի ճշմարտութիւն է, որ մի ժողովուրդ կամ մի հասարակութիւն, որը շրջապատված է մի այնպիսի տարրով, որը իրանից անհամեմատ աւելի ուժեղ ու բազմաթիւ է, բնականաբար, ժամանակի ընթացքում նա ենթարկվում է այդ ուժեղ տարրի ազդեցութեանը, սեփականացնելով իրան նրա զանազան յատկութիւնները, բարքը, սովորութիւնները և նոյն իսկ լեզուն։ Սակայն մատրասեցիք, համարեա թէ անյայտ ժամանակներից, շրջապատված լինելով հայ գիւղերով, մնալուանդ շատ մտիկ գտնվելով քաղաքին, որի հետ նրանք անընդհատ յարաբերութեան մէջ են, դարձեալ չեն կարողացել այնքան միջոցում տիրապետել հայոց լեզուին, մնալուանդ դա է իրանց հարազատ մայրենի լեզուն։ Լու ամենացաւալին այն է, որ նրանք ոչ թէ միայն չեն ձգտում ընտելանալ իրանց հարազատ հայերէն լեզուին, այլ և սաստիկ հակակրութիւն ունեն դէպի նա։ Լոս ինքս շատ անգամ եմ ականատես եղած, որ մի որ և է մատրասեցի, որը երկար տարիներ ապրած լինելով հեռաւոր երկիրներում, և հետևաբար բաւականին լաւ փարժված լինելով հայերէն լեզուի մէջ, իր հայրենի գիւղը վերադառնալուց յետոյ, երբ ճանապարհին պատահելով իր համագիւղացի եղբօրը, ողջունել է նրան ,,բարիՋՈՐՈՒՄ'' կամ ,,բարեւ ձեզ'' բառերով, վերջինս, փոխանակ նրան փոխադարձաբար ողջունելու, սկսել է նրան ծաղրել հետևեալ խօսքերով ,,Հալա ի նա դանիշ, փեհար խշտանայ զըՀուՌրա հեշտայ, շՀարՋի կալալՋի մատան''։—

,,Դեռ սրան նայեցէք, իր հայրական լեզուն թողած, քաղաքացու պէս (կամի ասել հայերէն) է խօսում։ Այս ամենից, կարծեմ, ընթերցողը կարող է մի գաղափար կազմել, թէ մինչև ո՞ր ասիճան խորասուզված է տգիտութեան խաւարի մէջ այս գիւղը։ Այժմ հարցնում ենք, ո՞ւմ պարտքն է արդեօք ամենն տեսակ միջոցներ գործադրել և առաջնորդել նրանց դէպի կրթութիւն և դէպի լուսաւորութիւն։ Ով պէտք է արդեօք քարոզէ, խրատէ և համոզէ որ սրանք թողնեն հին նախապաշարմունքները, թողնեն իրանց բոլորովին օտար և անհարազատ լեզուն և սովորեն գործածել իրանց ազգային մայրենի լեզուն։ ԲարեՀաՌ մեր քահանաները, որոնք իրանք ևս նոյնքան խրատի, քարոզի և կրթութեան կարոտ են, ինչքան և իրանց անմիթիթար հօտը։ Մեր քահանաները, որ արժան չեն համարում նոյն իսկ Աստուծոյ տաճարում մի բառ անգամ արտասանել հայերէն լեզուով, ո՞ւր մնայ որ ուրիշներին պիտի ուսուցանէին նոյնը կատարելու։ ,,Ա՛լ կարէ կոյր կուրի առաջնորդել, ապա թէ ոչ, երկոքեանն անկանին ի խորխորատ''։

Եթէ կայ այս գիւղում մի որ և է մըխիթարական երևոյթ, այս այն փոքրիկ ու գերահասակ մանուկներն են, որոնք ամենայն օր ուսումնարանից դուրս գալուց յետոյ, իրանց մայրենի լեզուով թոթովելով, փողոցներով վազէ վազ գնում են դէպի իրանց տները, չը կարողանալով ամենևին ազդել իրանց նախապաշարմունքի մէջ թաթախված ծնողաց վրա ու նրանց բարի օրինակ լինել։

Լյո՛, ուսումնարան է միայն, որ պիտի վերականգնէ այս գիւղում մոռացութեան փոշու միջից մայրենի լեզուն, որը դարերի հանգամանքներին զոհ է գնացել։ Ուսումնարան է, որ Մատրասայի համար ապագայ կրթեալ, ժամանակի ոգով զարգացած հայախօս ժողովուրդ պիտի պատրաստէ։ Սակայն ցաւօք սրտի պիտի խոստովանած, որ այս ուսումնարանը նայելով այն անմխիթար դրութեան, որի մէջ գտնվում է այժմ, մանաւանդ աչքի առաջ ունենալով ժողովրդի անտարբերութիւնը և անհոգութիւնը, դժուար կարելի է յուսալ, որ նա երկարատև գոյութիւն ունենայ։ Եթէ մինչև այժմ շարունակում է իր գոյութիւնը, այդ պէտք է վերագրել տեղւոյս հոգաբարձուաց՝ պ. պ. Ա. Հաշվերանցի, Ս. Ջանուանցի, Ա. Ակրիանցի և Ս. Դաղաբեանցի ջերմեռանդ և անխոնջ աշխատութեան, որոնք նոյն իսկ այս ուսումնարանի կառուցման սկզբնապատճառն են եղած, և որոնք ուսումնարանի բացման օրից մինչև ցայսօր ամեն կերպով տանում են իրանց վրա հոգաբարձական ծանր լուծը։ Ի նկատի ունենալով ուսումնարանի այժմեան անմխիթար դրութիւնը, յոյս ունեմ, որ պատուելի հոգաբարձուները այսուհետև աւելի ևս պիտի կրկնապատկեն իրանց աշխատութիւնը և ջանքերը ուսումնարանի յառաջադիմութեան համար, ամենևին չը վհատելով ժողովրդի սառնասրտութիւնից և անտարբերութիւնից, հաւատացած լինելով, որ ապագայ սերունդը կը գնահատէ նրանց աշխատութիւնը և ազգասիրական ջանքը։

Պարգեւ Լալաբէկեանց

ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ

—

21 հոկտեմբերի

Երբ որ «Մեղուի» եւ «Մշակի» մէջ ծագած կրօնական վէճերը սկսեցին մի փոքր դադարել, բոլորս էլ ուրախացել էինք. դադարից ասելով, կասկածում եմ ասել, որ միայն «Մշակը» լռեց, տեսնելով. որ «Մեղուի» հայհոյանքներին անախորժ է հայհոյանքներով պատասխանել։ Իսկ «Մեղուն» մէջ, եթէ ոչ ամեն համարի, գոնէ երկու համարից մէկի մէջ կար դարձեալ «Մշակի» դէմ հայհոյանքներ, մանաւանդ ֆեյլետոնի մէջ, որը եթէ «Մշակը» չը լինի, պ. Քաղքցին էլ նրան չի գտնի գրելու։ Լուտ չէ ասել պ. ճշմարտասօսը, եթէ «Մշակը» չը լինէր, «Մեղուն» վազուց դադարած կը լինէր, եւ մինչէ այս սուտ է։ Վեր ասէք «Մեղուի» Խերները. եւ դուք կը գտնէք ամբողջ առաջնորդող յօդուածներ, զանազան տեսակներից (Վեղծ). նամակներ. ֆեյլետոններ բոլորն էլ «Մշակի» եւ նրա Քրիստոնեկիների դէմ են գրված։ Սորանից աւելի ինչ կարող է պատգ ցոյց տալ, որ «Մեղուի» նիՍԸ «Մշակն է» մատակարարում։ Մենք շատ ժամանակից ի վեր սպասում ենք այդ մէջի դադարելուն, որովհետև արդէն ամեն մարդ հասկացաւ. Թէ ինչ բանի վրա էին վիճածները։ Փառք Աստուծոյ, այժմ ամեն ոք ունի դատողութիւն, ունի բանականութիւն եւ խելք. կարող է դատել երկու կողմը. եւ այնպէս հակվել ո՞ր կողմը որ կը ցանկանայ։ Ինչ հարկ կայ հետգհետէ հարցը ընդարձակել ու ընթերցողներին զրուցեցնել։ Արդէն ամենքս էլ իմացանք Թէ «Մեղուն» եւ Թէ «Մշակին», ուրեմն հարկ չը կայ այսուհետեւ փողոցային կեղտոտ բառեր նետելու։ Պ. Ամիրխանենցը աւետարանականների բարոյին է եւ մեզ վայել չէ, բաւական է. որ նա ազգաւ հայ է։ Պ. Ամիրխանենցը դաղտնի Նամակներ է գրում Վաղարշապատ եւ կամ ուրիշ տեղեր իրանց կրօնը հաստատ բռնելու համար. ո՛ւմ ինչ հոգն է. նա բարոյագրում է, կամ դրում է. «կրօնդ հաստատ բռնիր» եւ կամ «աշխատիր հօտդ շտապցնելու» եւ ոչ Թէ գրում է, Թէ հայ եւ, մամիեանական զարմիր։ Ինչ էր պատասխանում։ «Մշակը» եւ մենք Նորան հանդիսարաններս, մի հիմի վրա կեցած, զուրում ենք. որ կրօնը իրեն տեղը Քոզ կենայ. մենք Նորան ինը վրդովում, այլ մեզ միմիայն այժմեան ծնծաղամարին հարկաւոր է աղգոութիւն։ Ինչ մեզ ինչ փոՔ, Եթէ նա աշխատում է լուսաւորչականներին դէչի հարկ կայ դասում, կամ Թէ դրամական միջոցով է որսում։ „Մեղուն“, որ այդպէս շատ պաշտպան է կենում լուսաւորչական եկեղեցուն, փոխանակ Ամիրխանենանցին հայհոյելու, ինչի չէ նախատում հայոց տգէտ, անհոգ, շահասէր հոգեւորականներին, որ պատկանեն իրանց հօտը, որ զզոշ կենան եւ չը Քողնեն, որ ժողովուրդը ոլորոլորի ցանցը ընկնի։ Մի սդրատ, օրական հացի կարօտ լուսաւորական ընտանիքի ապատեղ է որ եւ իցէ լուսաւորչական բահանայ երը եւ իցէ, Քոզ բարեհաճի պ. խմբագիրը մեզ մատնացոյց անելու։ Բայց աւետարանական բահանաները Նորան անտակ հորից դէպի լոյս են հանում, ամբողջ ընտանիքներ վազանաս սոփից ազատում են։ Ինչպէս Նրանց չը յարգեն, Նրանց չը պաշտեն։ Ինչու «Մեղուի» պ. խմբագիրը միայն մի քանի յօդուած գրելու եւ մի քանի բաժանորդ գտնելու համար իրեն այդ Քոզակցի եւ կամ գործակալի դէմ յօդուածներ չէ տպում, ինչու, որովհետեւ նրա պ. Քոզակիցը կամ գործակալը Նորան շահ է տալիս մի այդպիսի չնչին բանի համար «Մեղուի» պ. խմբագիրը յանդգնում է ճշմարտութիւնը ծախելու։ Ինչպէս մի, եւ կամ մի հինգ անգամ տասնեակ գերդաստաններ չը պաշտեն իրանց ազատչին։ Ով չի անի այդպիսի բան։ Թող բարեհաճեն „Մեղուն“ եւ Նորա հանմիտ լուսաւորական բահանաները տարբար ընտանեք լուսաւորականներին, մինչեւ անդամ տանձիներին, տարիներով կերակրելու, այն ժամանակ Նորա կը տեսնեն, որ փոքր մեծ գեր է խաղում։ Իսկ մեր եկեղեցականները ընդհակառակն իրանք են կողոպտում։ Ինչ շատ լաւ յայտնի է, որ վաղարշապատում կան մօտ 40—50 տուն աւետարանական հայ ընտանիքներ, եւ նոցանից շատերը աղքատ են, այնպիսի աղքատներ, որ օրական հացի կարօտ, «գործել ոչ կարեն, մուրալ ամաչեն». ինչ անեն խեղճերը, մինչէ Էջմիածինը չը գիտէ Նորանց վիճակը, շատ լաւ գիտէ, ինձանից, մինչեւ եւ «Մեղուից» մօտիկ է. ինչու՞ չէ օգնում, ինչու չէ բարոյում. գոնէ Նրանց հաւատը պահպանելու համար, Թէ որ լաւ պաշտպան է հայ եկեղեցուն։ Ուրեմն, անտէր, անպաշտպան, անհոգ ժնոցան հօտը միշտ կարող է կորչել, ոչնչանալ եւ վերջապէս սպառվել....

Ինչու պէտք է մեղադրել Ամիրխանենանցին, կամ նրա նմաններին. գոնէ զրանք պատասանում են հայաՔիւնը։

Փոխանակ Նորանց գատապարտելու. պէտք է պատապարտել մեր եկեղեցականներին. պէտք է մեղադրել Նրանց անպիտանութիւնը, գորանով ազգին ասելի օգուտ տուած կը լինենք։ Իսկ մեզ բարոյներ կարդալ. այդ մասին խնդրում ենք Քոզ յաւ. «Մեղուի» պ. խմբագիրը. կրօնական վէճերի մասին, ինչ սեռներում մենք Նորանից շատ լաւ գիտենք։

«Մեղուի» պ. խմբագիրը ցանկանում է «Մշակին» Քոզակիցների իսկական անունները իմանալ, որովհետեւ կարող է համարում Նոցա. ինչ հարկ կայ Քոզակցի անունը, եւ կամ ապրանքը իմանալ, մինչդեռ իրը գիրը անուան եւ ազգանուան վրա չէ։ Միթէ հայհոյելու համար միայն հարկաւոր են անունները։ Եթէ նկատում է «Մեղուն» որ «Մշակի» մէջ գրուած նամակների մէջ ճշմարտութիւն հակառակ մի բան կայ, Քոզ հերթ, իսկ եթէ բոլորն էլ ճշմարտութիւն է, ինչ պէտք է անէ ազգանունը իմանալով։ Ա յդպիսի նոյն բաներով պարապել խորհուրդ չեմ տալ «Մեղուին», ազգի ծնծաղամար մօտ է. վան հիւանդանոց հարկաւոր է շինել. և գոյնս «Մրաքեալ ընկերութեան» նպաստ հարկաւոր է հաւաքել. սովը կրկին սկսված է. ձմրան տանում, պէտք է նուիրատուութիւն հաւաքել.—սպասում սպասիր յորդորներով Քոզ լրջնէ «Մեղուի» Խերները. եւ կամ զանազան տեսակ ազգային օգտակար գործերով Քոզ զբաղվի, հաւատացէք, որ աւելի հանկրուեՔամբ կը կարդանք «Մեղուն», ինչպէս որ կարդում ենք «Մշակը»։ Այս Թէ ոչ, կրօնական եւ գանազան անմեղական. ոչ ուրիշ տեսակ ախեղ ցեղեր վեներով Քոզ զբաղվի. չէ կարող օգուտ տալ ոչ լրագրի Խերները լցնելով. չէ կարող օգուտ տալ ոչ մեզ եւ ոչ իրեն։ «Մշակը» տգէտ է, անհիմն է։ Ամիրխանենցը, աւետարանականների բարոյին է կամենում է որպալ բոլոր լուսաւորականներին. Մէկիրզադեն մեզ՝ նիմներս եւ երգական ցնորքներ է կարդում. եւ